Տեղական զարգացման հիմնադրամ.
պատումներ Հայաստանի համայնքներից

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵԹՈՒԿՈՒՅՔԱԾՔԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

giz

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC



Տեղական զարգացման հիմնադրամ.

պատումներ Հայաստանի համայնքներից

Երևան, 2026թ.

Դավիթ Խուդաթյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Ուրախությամբ եմ ներկայացնում Հայաստանի տարբեր համայնքներում իրականացված զարգացման նախաձեռնությունների արդյունքները, որոնք միտված են ապահովելու համաչափ տարածքային զարգացում և բարելավելու հանրային ծառայությունների որակը:

Ծրագրերն ընդգրկում են մի շարք կարևոր ուղղություններ՝ տուրիզմի զարգացում, գյուղատնտեսության խթանում, առողջապահական ծառայությունների հասանելիության բարելավում, կրթական և սպորտային ենթակառուցվածքների արդիականացում, ինչպես նաև վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրումներ: Դրանք իրականացվել են տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կառույցների և միջազգային գործընկերների համագործակցությամբ:

Իրականացված աշխատանքների արդյունքում համայնքներում էապես բարելավվել են ենթակառուցվածքները, ընդլայնվել են ծառայությունների հասանելիությունն ու որակը, ստեղծվել են նոր հնարավորություններ բնակիչների համար: Այս փոփոխությունները տեսանելի են մարդկանց առօրյայում՝ ավելի հասանելի ծառայություններ, բարելավված պայմաններ և զարգացման նոր հեռանկարներ:

Կարևոր ենք համարում նաև համայնքների ակտիվ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում: Համաֆինանսավորման և համագործակցության մեխանիզմները ոչ միայն նպաստում են ծրագրերի արդյունավետ իրականացմանը, այլ նաև ձևավորում են պատասխանատվության և գործընկերության մշակույթ:

Մեր առաջնահերթություններից է շարունակել ներդրումները համայնքային ենթակառուցվածքների զարգացման, հանրային ծառայությունների հասանելիության ընդլայնման, շրջակա միջավայրի պահպանության և տեղական տնտեսությունների խթանման ուղղությամբ՝ ապահովելով կայուն և երկարաժամկետ արդյունքներ:

Վստահ ենք, որ հետևողական աշխատանքի և համատեղ ջանքերի շնորհիվ հնարավոր է ձևավորել զարգացող, մրցունակ և կենսունակ համայնքներ, որտեղ մարդիկ ունեն ապրելու, ստեղծելու և իրենց ապագան կառուցելու իրական հնարավորություն:

Նման նախաձեռնությունները ցույց են տալիս, որ հետևողական աշխատանքի և համագործակցության շնորհիվ համայնքային զարգացումը վերածվում է մարդկանց կյանքի որակի իրական փոփոխության: Իսկ յուրաքանչյուր զարգացած համայնք՝ ավելի ուժեղ և կայուն Հայաստանի հիմքն է:

Կլաուդիա Բուշ

Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան

Ուժեղ համայնքները ժողովրդավար, բարգավաճ և դիմակայուն երկրի հիմքն են. այդ իսկ պատճառով տեղական ինքնակառավարման ամրապնդումը Հայաստանի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության համագործակցության հիմնարար սկզբունք է:

Հայաստանի տարբեր համայնքներում տեղական դերակատարներն ամենօրյա մարտահրավերներին արձագանքելու կիրառելի և ստեղծագործ լուծումներ են գտնում ՝ բարելավելով ծառայությունները, իրենց քաղաքներում ու գյուղերում ստեղծելով ապրելու ավելի բարենպաստ միջավայր: Նրանց հանձնառությունն ուղղված է ինչպես այսօրվա քաղաքացիներին, այնպես էլ ապագա սերունդներին և համահունչ է գյուղական համայնքների կարիքներին, սովորույթներին ու ավանդույթներին, որոնք դարեր շարունակ ձևավորել են Հայաստանի ինքնությունը:

Ուրախ եմ այսօր ներկայացնել այս գրքույկը, որը ցույց է տալիս, թե ինչպես կարող է տեղական գաղափարներին ուղղված գերմանական աջակցությունը՝ համադրված մարդկանց ներգրավվածության, նախաձեռնողականության և համագործակցության հետ, նշանակալի արդյունքներ ապահովել Հայաստանի ապագայի համար: Լինեն դրանք վերազինված հանրային ենթակառուցվածքներ, բարելավված առողջապահական ծառայություններ, էներգաարդյունավետ լուծումներ, թե երիտասարդների համար նոր հնարավորություններ՝ այս նախաձեռնությունները ցույց են տալիս, որ անգամ փոքր ներդրումները կարող են տևական և կայուն օգուտներ բերել համայնքներին:

Գերմանիան՝ որպես ապակենտրոնացման և համայնքային զարգացման ոլորտում Հայաստանի վաղեմի գործընկեր, ուրախ է աջակցել այս ջանքերին GIZ-ի միջոցով՝ Շվեյցարիայի կառավարության համաֆինանսավորմամբ և Հայաստանի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ սերտ համագործակցությամբ: Մեր ընդհանուր նպատակն է հնարավորություն տալ համայնքներին և տեղական շահագրգիռ կողմերին իրականացնել լուծումներ, որոնք կարձագանքեն իրենց տնտեսական և զարգացման կարիքներին:

Շոշափելի բարելավումներից բացի, այս նախաձեռնությունները նաև ընդգծում են ժողովրդավարության, երկխոսության, մասնակցության, գործընկերության և համատեղ պատասխանատվության արժեքը: Դրանք արտացոլում են բազմաթիվ մարդկանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների, մասնագետների, համայնքի բնակիչների և գործընկերների նվիրվածությունը, որոնք համատեղ աշխատում են գաղափարները կյանքի կոչելու համար:

Գերմանիան շարունակում է աջակցել Հայաստանին կենսունակ, ապագայամետ, ներառական համայնքների ամրապնդմանը՝ հանուն ներկա և ապագա սերունդների:

Անդրեա Բարբարա Բաուման

Հայաստանի Հանրապետությունում Շվեյցարիայի դեսպան

Կայուն տեղական զարգացումն առավել արդյունավետ է, երբ այն բխում է հենց համայնքների գաղափարներից, եռանդից և մասնակցությունից: Հայաստանի տարբեր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինները՝ բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ համագործակցությամբ, համատեղ աշխատում են՝ ստեղծելու լուծումներ, որոնք արձագանքում են իրենց ընդհանուր կարիքներին ու ձգտումներին:

Այս հրապարակման մեջ ներկայացված պատմությունները ցույց են տալիս, թե ինչպես կարող է համայնքի ակտիվ ներգրավվածությունը տեղական նախաձեռնությունները վերածել շոշափելի և կայուն արդյունքների: Այս փորձառությունները հատկապես ոգեշնչող են դառնում դրանց հիմքում ընկած համագործակցության ոգու շնորհիվ: Նման համագործակցային մոտեցումը ոչ միայն ամրապնդում է զարգացման նախաձեռնությունների նկատմամբ տեղական դերակատարումը, այլև խթանում է վստահությունը, համերաշխությունը և համատեղ պատասխանատվության մշակույթը: Սա համահունչ է Շվեյցարիայի փորձին, որտեղ մասնակցային կառավարումը, տեղական մակարդակում որոշումների կայացումը և քաղաքացիների ու պետական հաստատությունների համատեղ պատասխանատվությունը վաղուց կարևոր դեր են խաղում կայուն և ներառական զարգացման գործում:

Շվեյցարիան աջակցում է այս ջանքերին՝ GIZ-ի միջոցով, Գերմանիայի կառավարության հետ համատեղ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ: Խրախուսելով մասնակցային որոշումների կայացումը և համաֆինանսավորման մեխանիզմները՝ նախաձեռնությունը նպաստում է, որ զարգացմանն ուղղված լուծումները մշակվեն հենց այն մարդկանց կողմից, ովքեր լավագույնս գիտեն իրենց համայնքները: Մենք ակնկալում ենք, որ Հայաստանում ավելի ու ավելի շատ համայնքներ կօգտվեն այս մոտեցումից:

«Տեղական զարգացման հիմնադրամի» մասին

Տեղական զարգացումն առավել արդյունավետ է, երբ այն արտացոլում է համայնքների իրական կարիքներն ու այն մարդկանց ձգտումները, դիմակայունությունն ու նախաձեռնողականությունը, որոնց համար այն իրականացվում է: Հայաստանի տարբեր համայնքներում արձանագրված արդյունքները վկայում են, որ համայնքների զարգացման տեսլականի, համագործակցության և նպատակային աջակցության համադրումը կարող է հանգեցնել շոշափելի և տևական փոփոխությունների՝ տեղական ներուժը վերածելով կայուն եկամուտների և աշխատատեղերի:

Այս հրապարակման մեջ ներկայացված պատմությունները ցույց են տալիս, թե ինչպես կարող են համայնքային գաղափարները փոխել մարդկանց առօրյա կյանքը: Այս նախաձեռնությունները ենթակառուցվածքների զարգացման ներդրումներ չեն զուտ. դրանք նաև ներդրումներ են վստահության, համագործակցության և համայնքային նորարարության մեջ: Դրանք ստեղծում են միջավայր, որտեղ քաղաքացիները կարող են ակտիվորեն մասնակցել իրենց համայնքների վերաբերյալ որոշումների կայացմանը: Այս նախաձեռնությունները ցույց են տալիս, որ տեղական ինքնակառավարման մարմինները, բնակիչներն ու մասնավոր կառույցները՝ միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ, կարող են համատեղ ուժերով բացահայտել տնտեսական ներուժը, բարելավել հանրային ծառայությունները և արձագանքել համայնքային կարիքներին: Համատեղ ջանքերի արդյունքները տեսանելի են՝ ծառայությունների որակի բարձրացում, նոր բիզնեսների հիմնում և կյանքի որակի բարելավում:

Այս գրքում ներկայացված են «Տեղական զարգացման հիմնադրամի» շրջանակում արձանագրված հաջողության պատմություններից միայն մի քանիսը: Հիմնադրամը միջծրագրային նախաձեռնություն է, որի նպատակն է նպաստել Հայաստանի համայնքներում ներառական և կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը:

«Տեղական զարգացման հիմնադրամն» իրականացվում է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ)-ի կողմից՝ Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների ֆինանսավորմամբ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ:

2021 թվականից ի վեր հիմնադրամն աջակցում է տեղական նախաձեռնություններին, որոնք նպաստում են Հայաստանի մարզերում եկամուտների խթանմանն ու աշխատատեղերի ստեղծմանը և համայնքների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիների մասնակցությանը: Մինչ օրս իրականացվել է 46 նախագիծ, ևս 23-ը գտնվում են իրականացման փուլում՝ Հայաստանի բոլոր մարզերում: Ի թիվս այլ արդյունքների՝ հիմնադրամը նպաստել է 228 աշխատատեղի ստեղծմանը և բարելավել 2800 տնային տնտեսությունների գյուղատնտեսական հնարավորությունները:

GIZ-ն ուրախ է աջակցել համայնքներին՝ նպաստելով, որ դպրոցների, ճանապարհների և հանրային տարածքների վերաբերյալ որոշումներն արտացոլեն քաղաքացիների ձայնը և խթանեն երկարաժամկետ կայունություն ու բարեկեցություն:

Վերապահում. Սույն հրապարակման մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտացոլեն Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների կամ GIZ-ի պաշտոնական դիրքորոշումները:

Պատումներ Հայաստանի հետևյալ համայնքներից.



- Ախուրյան
- Ապարան
- Արենի
- Բյուրեղավան
- Գյուլագարակ
- Գորիս
- Մասիս
- Մարտունի
- Մեղրի
- Չարենցավան
- Սևան
- Վաղարշապատ
- Փամբակ
- Ֆիոլետովո

Ախուրյան

Արևային էներգիան ապահովում է Բասենի մանկապարտեզի անխափան գործունեությունը

Երեք երեխաների մայր Լուսինե Գևորգյանն աշխատում է Ախուրյան համայնքի Բասեն բնակավայրի մանկապարտեզում՝ որպես դաստիարակի օգնական: Թեև նրա բոլոր երեխաները հաճախել են այս մանկապարտեզը, այսօր բարելավված պայմաններից լիարժեք օգտվում է միայն կրտսեր զավակը:

«Իմ մեծ երեխաները մանկապարտեզ կարող էին հաճախել միայն տաք ամիսներին, ինչը խաթարում էր նրանց առօրյան: Այսօր մանկապարտեզը գործում է ողջ տարվա ընթացքում, և իմ կրտսեր երեխան սովորում է ջերմ, հարմարավետ և կայուն կրթական միջավայրում»,- ասում է Լուսինեն:

Ախուրյանը Հայաստանի միավորված ամենախոշոր համայնքներից մեկն է՝ ընդգրկելով բազմազան կարիքներով 35 բնակավայր: Համայնքային հաստատությունների, հատկապես մանկապարտեզների անխափան գործունեության ապահովումը երկար տարիներ լուրջ մարտահրավեր է եղել: Բասենում գազամատակարարման բացակայության պատճառով մանկապարտեզի ջեռուցման և տաք ջրի հարցում համայնքապետարանը լիովին ապավինում էր էլեկտրաէներգիային, ինչի հետևանքով տարեկան ծախսերը կազմում էին մոտ 1,8 մլն դրամ, իսկ ձմռան ամիսներին ստիպված էին լինում հաստատությունը փակել:

Այս խնդիրը լուծելու նպատակով համայնքը մշակեց նորարարական և կայուն լուծում՝ մանկապարտեզների շենքի տանիքին արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրում: Ծրագիրը կյանքի կոչվեց Տեղական զարգացման հիմնադրամի աջակցությամբ և Ախուրյան համայնքի համաֆինանսավորմամբ:

Բասենի մանկապարտեզում տեղադրված ֆոտովոլտային համակարգն այժմ ապահովում է հուսալի ջեռուցում և տաք ջուր ամբողջ տարվա ընթացքում: Արդյունքում Բասենի և հարակից բնակավայրերի երեխաներն ունեն նախադպրոցական կրթության շարունակական հասանելիություն, իսկ մանկապարտեզի աշխատակիցները կարողանում են պահպանել իրենց աշխատատեղերը նաև ձմռան ամիսներին:

«Մինչ այժմ մեր համայնքի մանկապարտեզների մեծ մասը կարող էր գործել միայն տաք ամիսներին էլեկտրաէներգիայի բարձր ծախսերի պատճառով: Արևային էներգիան փոխեց այս իրականությունը, և Բասենի մանկապարտեզն այժմ գրեթե ամբողջությամբ ապահովում է իր էներգետիկ կարիքները կայուն եղանակով»,- ասում է Ախուրյան համայնքի նախադպրոցական կրթության պատասխանատու Սոֆյա Հովհաննիսյանը:

Էներգախնայողության շնորհիվ համայնքը հնարավորություն է ստացել վերանորոգումներ կատարել մանկապարտեզի պայմանների բարելավման, տարողունակության ընդլայնման և երեխաների համար լրացուցիչ տարածքների ստեղծման ուղղությամբ:

Բասենի մանկապարտեզի տնօրեն Մանիկ Հովհաննիսյանը, որը ղեկավարում է հաստատությունը վերջինիս հիմնադրումից՝ 2011 թվականից սկսած, նշում է. «Մինչ արևային համակարգի տեղադրումը ջեռուցումը բավարար չէր, իսկ էլեկտրաէներգիայի օգտագործումը սահմանափակ էր: Այսօր բոլոր սենյակները տաք են, էներգիայի խնայողությունը բավարարում է մինչև մայիս, իսկ ֆինանսական խնայողությունների հաշվին վերանորոգվել են երկու սենյակ և առաջին հարկի միջանցքը»:

Կրթությունից բացի, ծրագիրը նաև բնապահպանական ազդեցություն ունի. այն նվազեցնում է ածխաթթու գազի արտանետումները: Հիմք ընդունելով այս հաջող փորձը՝ Ախուրյան համայնքը համագործակցել է մասնավոր հատվածի հետ՝ Բասենում տեղադրելով արևային էներգիայով աշխատող փողոցային լուսավորություն՝ համակցված օպտիկամանրաթելային համացանցի ենթակառուցվածքի հետ:

Վերականգնվող էներգիայի, տեղական գործընկերությունների և հեռանկարային ծրագրավորման համադրմամբ ծրագիրը ցույց է տալիս, թե ինչպես կարող են կայուն լուծումներն ամրապնդել հանրային ծառայությունները, բարելավել կյանքի որակը և նպաստել գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Ապարան

Հյուրատների ցանցը խթանում է զբոսաշրջությունը Ապարանում

Ապարանում զբոսաշրջության խթանումը սկիզբ առավ համայնքի բնակիչների հետ քննարկված մի պարզ, բայց հզոր գաղափարից՝ ստեղծել հյուրատների ցանց և այդպիսով բացահայտել համայնքի զբոսաշրջային ներուժը: Այս նախաձեռնությունը կյանքի կոչվեց Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների, ինչպես նաև Ապարանի համայնքապետարանի աջակցությամբ:

«Մանկուց սրտումս պահած երազանքը վերածվեց իրական նպատակի և ի վերջո իրականացավ,- ասում է ծրագրի շահառուներից Մարի Կարապետյանը:- Այս աջակցության շնորհիվ ես կարողացա հիմնել վրանային ճամբար և իմ ներդրումն ունենալ գյուղիս զբոսաշրջության զարգացման գործում: Իմ նպատակն է առաջարկել մշակութային, կրթական և էկո-ճամբարային փորձառություններ»:

Լինելով համայնքի ակտիվ քաղաքացի՝ Մարին, նախաձեռնող այլ բնակիչների հետ միասին այս գաղափարը ներկայացրեց տեղական իշխանություններին: Տեսնելով բնակիչների մեծ հետաքրքրվածությունը հյուրատների ստեղծման միջոցով Ապարանում զբոսաշրջության և տնտեսական զարգացման խթանման նկատմամբ՝ համայնքապետարանը նախաձեռնությունն ընդգրկեց իր առաջնահերթությունների շարքում և առաջարկ ներկայացրեց Տեղական զարգացման հիմնադրամին հյուրատների ցանց ձևավորելու նպատակով: Արդյունքում հյուրընկալության ոլորտում ստեղծվեց 11 նոր բիզնես, բարելավվեցին զբոսաշրջության խթանման միջոցները և ձևավորվեց համայնքի ու մասնավորի միջև համագործակցության մշակույթ:

«Մեզ հաջողվեց կառուցել վստահություն, ձևավորել գործընկերություն և ներդնել միասին աշխատելու նոր մոտեցում,- նշում է Ապարանի համայնքապետարանի ներկայացուցիչ Էլեոնորա Միրզոյանը:- Այս համագործակցությունն էականորեն ամրապնդեց մեր կարողությունները՝ տեղական նախաձեռնություններ մշակելու և իրականացնելու ուղղությամբ»:

Արդյունքները տեսանելի են արդեն այսօր: «Սահմանափակ կացարանների պատճառով նախկինում մեծ թվով զբոսաշրջիկների հյուրընկալումը լուրջ խնդիր էր,- ասում է համայնքի ղեկավարի տեղակալ Հրայր Մկրտչյանը:- Այսօր մենք կարող ենք Ապարանում և հարակից բնակավայրերում ընդունել մինչև 150 հյուր, այդ թվում՝ միջազգային այցելուների, որոնք մասնակցում են մշակութային միջոցառումների, օրինակ՝ քանդակագործների ամենամյա սիմպոզիումին»:

Ապարանի հյուրատները

Զբոսաշրջությունից բացի, հյուրատների ցանցը նպաստել է նաև համայնքի դիմակայունության ամրապնդմանը: Սեզոնից դուրս ամիսներին մի շարք հյուրատների սեփականատերեր անվճար կամ մատչելի պայմաններով կացարան են տրամադրում Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին՝ ցույց տալով, թե ինչպես կարելի է տեղական տնտեսական զարգացմամբ արձագանքել նաև սոցիալական կարիքներին:

Ապարանում հյուրատուն է վարում նաև Մելիք Խաչատրյանը: Ֆինանսավորման շնորհիվ նա հյուրատան համար ձեռք է բերել խոհանոցի կահույք, բազմոց և փոքր սեղան: **«Զբոսաշրջիկների հոսքը հիմնականում սեզոնային է. ամռանը պահանջարկը զգալիորեն ավելի բարձր է: Ներկայումս՝ ձմեռային սեզոնին, հյուրատունն անվճար տրամադրում եմ Լեռնային Ղարաբաղից եկած մի ընտանիքի»**,- ասում է Մելիքը: Սակայն ձմեռային ենթակառուցվածքների զարգացմանը զուգահեռ կացարանների նկատմամբ պահանջարկն աստիճանաբար աճում է:

Ընդհանուր տեսլականի և գործընկերային համագործակցության շնորհիվ Ապարանը կարողացավ տեղական նախաձեռնությունը վերածել երկարաժամկետ ազդեցության՝ խթանելով զբոսաշրջությունը, ամրապնդելով համագործակցությունը և անհրաժեշտության դեպքում աջակցելով համայնքին:

Արենի

Արենի համայնքն ընդլայնում է սպորտի հասանելիությունն Աղավնաձորում

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում բնակվող՝ ֆուտբոլի նվիրված երկրպագու տասնչորսամյա Մարին վաղուց էր երազում զբաղվել ֆուտբոլով՝ հույս ունենալով, որ մի օր կմիանա ֆուտբոլային թիմի և կմասնակցի առաջնությունների:

Սակայն տարիներ շարունակ Աղավնաձորի և հարակից գյուղերի՝ հատկապես վեց սահմանամերձ բնակավայրերի երեխաներն ու երիտասարդները գրեթե զրկված էին իրենց սիրած մարզաձևերով զբաղվելու հնարավորությունից: Ենթակառուցվածքների բացակայությունը բացասաբար էր ազդում ոչ միայն ֆիզիկական ակտիվության և առողջության վրա, այլ նաև սահմանափակում էր երիտասարդների մասնակցությունը համայնքային կյանքին, անձնական զարգացման հնարավորությունները և սոցիալական ներառվածությունը:

2024 թվականին Աղավնաձորի նախկին մարզադահլիճը, որը տարիներ շարունակ լքված էր, ամբողջությամբ վերանորոգվեց: Այսօր այն ապահով ու հասանելի միջավայր է Արենի համայնքի ինը գյուղերի (այդ թվում՝ սահմանամերձ) շուրջ 400 երեխայի և երիտասարդի համար:

Մարին միշտ երազել է ֆուտբոլիստ դառնալ

Մարին առաջիններից էր, որ սկսեց հաճախել մարզադահլիճի ֆուտբոլի պարապմունքներին: **«Ֆուտբոլն իմ կիրքն է. սիրում եմ ոչ միայն դիտել, այլևս խաղալ»**,- ասում է նա: Նրա քույրը՝ Լյուսին, «Ռեալ Մադրիդի» մեծ երկրպագու է. երբեք բաց չի թողնում խաղերը և երազում է մի օր մարզադաշտի տրիբունաներից քաջալերել Մարիին:

«Նախկինում մենք մարզվելու տեղ չունեինք, և շատ երեխաներ պարզապես մնում էին տանը կամ մարզվում էին դրսում, երբ եղանակը թույլ էր տալիս: Հիմա ունենք դահլիճ և համապատասխան գույք, որը կարող է օգնել մեզ պատրաստել մրցանակակիր մարզիկներ»,- ասում է Աղավնաձորի դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Արսեն Շահինյանը:

Մարզադահլիճի բացմանը մասնակցում էին ՀՀ-ում Գերմանիայի և Շվեյցարիայի դեսպանությունների, ինչպես նաև Վայոց ձորի մարզպետարանի ներկայացուցիչները

Մարզադաշտը նախկինում և այսօր

Այս փոփոխությունը հնարավոր դարձավ Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների, ինչպես նաև Արենի համայնքի համաֆինանսավորմամբ:

Ներառականությունն այս նախաձեռնության առանցքային բաղադրիչն էր: Մարզադահլիճը նախագծվել և կահավորվել է այնպես, որ հարմար լինի նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար, որպեսզի յուրաքանչյուր երիտասարդ՝ անկախ ֆիզիկական կարողություններից, ունենա որակյալ սպորտով և ժամանցով զբաղվելու հնարավորություն: Տրանսպորտային խոչընդոտները հաղթահարելու համար համայնքը՝ ծնողների մասնակի մասնակցությամբ, կազմակերպել է միկրոավտոբուսային երթուղիներ, ինչը մարզադահլիճը հասանելի է դարձրել նույնիսկ ամենահեռավոր բնակավայրերի ընտանիքների համար:

Դեռ մեկ տարի առաջ Աղավնաձորում շատերը կասկածում էին, որ այս նախագիծը երբևէ կյանքի կկոչվի: Սակայն շինարարության մեկնարկով համայնքում հուզմունքի ու սպասման ալիք բարձրացավ:

33-ամյա Արսենը՝ չորս երեխաների հայր, խաղողագործ-ֆերմեր և նախկին մարզիկ, հիշում է գյուղի հարուստ մարզական անցյալը: **«Աղավնաձորը ժամանակին մարզական ակտիվությամբ տարածաշրջանում երկրորդ գյուղն էր: Մենք ունեինք հիանալի մարզիկներ, նույնիսկ մարզադաշտ ու լողավազան, որոնք այժմ ավերակ են: Ես պատրաստ եմ իմ ամբողջ էներգիան ներդնել՝ վերակենդանացնելու այս ժառանգությունը՝ հանուն իմ երեխաների և մեր գյուղի երիտասարդների»**,- ասում է նա:

Այսօր Աղավնաձորի պատմության նոր էջ է բացվում: Այն, ինչը մի ժամանակ լքված շինություն էր, այժմ դարձել է էներգիայի, ծիծաղի, թիմային ոգու և մեծ նպատակների կենտրոն:

Այս նախագիծը միայն մարզադահլիճ կառուցելու մասին չէ. այն ավանդույթների վերականգնման, երազանքների իրականացման մասին է: Այն ապացուցում է, որ նույնիսկ ամենահեռավոր անկյուններում փոփոխությունը հնարավոր է, երբ համայնքը համախմբվում է՝ հանուն ավելի պայծառ, ուժեղ և առաջադեմ ապագայի:

Բյուրեղավան

Ժամանակին ախտորոշում. առողջապահության որակի բարելավում Բյուրեղավանում

Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի խաղաղ առօրյայում տեղացի ժամագործ Ռաֆիկ Գալուստյանի օրերն անցնում են ճշգրտությամբ ու հոգատարությամբ ժամացույցներ վերանորոգելով: Սակայն մի օր նրա սովորական աշխատանքային ընթացքը անսպասելիորեն խախտվեց, երբ ժամացույցը նորոգելիս մատը վնասվեց:

«Գրեթե չէի կարողանում շարժել մատս»,- հիշում է Ռաֆիկը: **«Անմիջապես դիմեցի պոլիկլինիկա, որտեղ ինձ արագ ուղարկեցին ռենտգեն հետազոտության: Ամեն ինչ արվեց շատ օպերատիվ և պրոֆեսիոնալ կերպով: Բժիշկներն ուշադիր էին, իսկ բոլոր ծառայությունները՝ անվճար: Ես իսկապես երախտապարտ էի»:**

Մինչ վերջերս նման արագ արձագանքը Բյուրեղավանում գրեթե անհնար էր: Տարիներ շարունակ համայնքի բնակիչները ստիպված էին նույնիսկ ամենապարզ ախտորոշիչ հետազոտությունների համար մեկնել Աբովյան կամ այլ քաղաքներ:

Առանց ռենտգեն և ուլտրաձայնային սարքավորումների՝ շուրջ 13,000 բնակչի սպասարկող քաղաքային պոլիկլինիկան կարող էր ապահովել միայն առաջին բուժօգնություն: Ավելի բարդ դեպքերը ենթադրում էին երկար ճանապարհներ, լրացուցիչ ծախսեր և ուշացած ախտորոշում:

«Բյուրեղավան համայնքը երբեք ռենտգեն սարք չի ունեցել»,- ասում է պոլիկլինիկայի նախկին տնօրեն բժիշկ Միքայելյանը: - **Մենք մշտապես ստիպված էինք հիվանդներին ուղարկել այլ բուժհաստատություններ և նրանց ծախսերի մի մասը հոգալ պետական սուբսիդավորման հաշվին»:**

Փոփոխություն մտցնելու վճռականությամբ՝ Բյուրեղավանի համայնքապետարանը դիմեց Տեղական զարգացման հիմնադրամին՝ նպատակ ունենալով ուժեղացնել քաղաքի առողջապահական ծառայությունները:

Հիմնադրամի միջոցով տրամադրված 16 միլիոն դրամի և համայնքապետարանի

համաֆինանսավորմամբ հատկացված հավելյալ գրեթե յոթ միլիոն դրամի շնորհիվ պոլիկլինիկան վերջապես համալրվեց ժամանակակից ռենտգեն և ուլտրաձայնային սարքերով՝ փոփոխություն, որն արմատապես վերափոխեց տեղական առողջապահական համակարգը:

«Այժմ մենք խնայում ենք թե՛ ժամանակ, թե՛ ռեսուրսներ»,- ասում է բժիշկ Միքայելյանը: **«Այն միջոցները, որոնք նախկինում ծախսում էինք հիվանդների տեղափոխման վրա, կարող ենք ուղղել այլ կարիքների, իսկ մեր բնակիչները կարող են որակյալ բուժօգնություն ստանալ հենց այստեղ՝ իրենց քաղաքում»:**

Նոր սարքավորումների տեղադրումից ի վեր ռենտգեն և ուլտրաձայնային հետազոտություններից արդեն օգտվել է ավելի քան 8800 բուժառու: Ռենտգեն և ուլտրաձայնային ծառայությունները դարձել են կարևոր գործիքներ՝ սկսած կոտրվածքների ախտորոշումից մինչև ներքին օրգանների հիվանդությունների հայտնաբերում, ինչը բուժանձնակազմին հնարավորություն է տալիս անհապաղ օգնություն ցուցաբերել՝ առանց ուղեգրերի կամ ուշացումների:

Ռաֆիկի՝ քաղաքի ժամագործի համար սա նշանակում է ավելի արագ վերադառնալ իր գործին, որպեսզի ուրիշների ժամանակը ճիշտ ընթանա: Նրա պատմությունը մեկն է շատերից, սակայն այն վառ կերպով ցույց է տալիս, թե ինչպես կարելի է տեղական նախաձեռնություններին թիրախային աջակցության շնորհիվ ապահովել ավելի որակյալ բուժօգնություն և առողջապահական ծառայությունների համընդհանուր հասանելիություն՝ բարելավելով համայնքի բնակիչների կյանքի որակը:



Գյուլագարակ

Արևային վահանակների միջոցով Գյուլագարակում մշակութային և սպորտային կյանքը նոր շունչ է ստանում

Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի մշակութային և կրթական հաստատությունները Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակում տեղադրված արևային վահանակների շնորհիվ այժմ կարող են գործել ամբողջ տարվա ընթացքում: Նախաձեռնությունից օգտվել են Գյուլագարակի արվեստի դպրոցը, Կուրթանի մշակույթի տունը, ինչպես նաև Գարգառ և Վարդաբլուր բնակավայրերի արտադպրոցական կրթական հաստատությունները՝ համայնքի բնակիչների համար ստեղծելով մշակութային և սպորտային գործունեության նոր հնարավորություններ:

Գյուլագարակի մշակույթի տան նորակառույց շենքը

Գյուլագարակի արվեստի դպրոցը, որը սպասարկում է նաև հարակից բնակավայրերը, այժմ դասերը կազմակերպում է ժամանակակից, տաք և լուսավոր շենքում՝ առանց ընդհատումների:

«Մեր դպրոցը հպարտանում է իր շնորհալի սաներով՝ մրցանակակիր երաժիշտներով և նկարիչներով»,- ասում է Գյուլագարակի արվեստի դպրոցի տնօրեն Ելենա Խաչատրյանը: **«Նոր շենք տեղափոխվելուց հետո կարող ենք դաշնամուրի, ազգային գործիքների, վոկալի և կերպարվեստի դասընթացներ անցկացնել ամբողջ տարվա ընթացքում»:**

Տնօրեն Ելենա Խաչատրյանն ուսուցիչների հետ քննարկում է ուսումնական ծրագիրը

Մինչ տեղափոխվելն արվեստի դպրոցը գործում էր համայնքապետարանի վարչական շենքում, որտեղ սահմանափակ տարածքը լուրջ դժվարություններ էր ստեղծում ուսուցման և փորձերի համար: Դժվար էր երաժշտության ու նկարչության դասերը և համայնքապետարանի առօրյա աշխատանքը կազմակերպել նույն հարկի տակ:

Գյուլագարակ համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանը ներկայացնում է արվեստի դպրոցի կառուցման գործընթացը

Արվեստի դպրոցի վերանորոգումից հետո, որն իրականացվել է պետական սուբվենցիոն ծրագրի շրջանակում՝ գերմանական և շվեյցարական կառավարությունների աջակցությամբ, տեղադրվել են արևային ֆոտովոլտային կայաններ՝ ապահովելով շենքի անխափան աշխատանքը տարվա բոլոր եղանակներին: Վերականգնվող էներգիայի նմանատիպ լուծումներ ներդրվել են նաև համայնքի այլ բնակավայրերի հինգ արտադպրոցական կրթական հաստատություններում:

26-ամյա Անգելինան, որի հնգամյա որդին դպրոցի սաներից է, պատմում է. «Անչափ ուրախ եմ, որ որդիս կարող է հաճախել արվեստի դպրոցի դաշնամուրի դասերին: Նա շաբաթական 2-3 անգամ դասի է գնում մանկապարտեզից հետո: Հիմա, երբ շենքը նոր է, լուսավոր ու տաք, նա էլ ավելի մեծ հաճույքով է մասնակցում դաշնամուրի և սոլֆեջիոյի դասերին»:



Սաները նույնպես բարձր են գնահատում բարելավված պայմանները: 14-ամյա Նանեն յոթ տարի է՝ ջութակ է սովորում արվեստի դպրոցում: Նա ասում է, որ նոր շենքը հնարավորություն է տալիս առանց միմյանց խանգարելու պարապել և դասերը շարունակել անգամ ձմռանը: 13-ամյա Սուսիկը քանոն է նվագում: Նա ժպտալով ավելացնում է. **«Այստեղ շատ ավելի լավ է: Յուրաքանչյուրս մեր առանձին դասասենյակն ունենք»:**

Հիմնադրամն աջակցել է նաև Կուրթանի մշակույթի տան էներգետիկ արդիականացմանը: Խորհրդային շրջանի այս շենքում տեղակայված են համայնքային գրադարանը, ինչպես նաև անցկացվում են

Կուրթանի մշակույթի տունը

պարային և մարզական դասընթացներ: Այն համայնքի միակ վայրն է, որտեղ տարբեր տարիքի մարդիկ կարող են հավաքվել և միասին անցկացնել իրենց ժամանցը:

«Արևային վահանակների տեղադրումից առաջ ձմռանը շենքը չէր գործում: Էլեկտրաէներգիայի ծախսերը հասնում էին մոտ 3 միլիոն դրամի, ինչը փոքր համայնքի համար ծանր բեռ էր: Երբ տեղեկացանք Հիմնադրամի մասին, աշխատեցինք օր ու գիշեր, կազմակերպեցինք հանդիպումներ ու քննարկումներ բնակիչների հետ, որպեսզի նրանց կարիքները ներառենք ծրագրում և համայնքային բյուջեում»,- ասում է Գյուլագարակ համայնքի ղեկավարի տեղակալ Ռուսլան Օհանյանը՝ կարևորելով Հիմնադրամի նշանակությունը:

«Այս ներդրումները մեզ օգնում են խնայել և ավելի շատ ներդնել մեր համայնքի զարգացման մեջ»,- հավելում է Օհանյանը:

Էներգետիկ կայունությունից բացի, այս նախաձեռնությունը ստեղծել է երկարաժամկետ հնարավորություններ, որպեսզի համայնքի բնակիչները տարվա ընթացքում մշտապես օգտվեն կրթական, մշակութային և մարզական ծառայություններից:

Կուրթանի մանկապարտեզը

Գորիս

Թաքնված գանձից դեպի զարգացող էկո-արկածային ուղղություն. Շորին Ձոր կիրճի բացահայտումը Գորիսում

Հայաստանի հարավում՝ Գորիսի արվարձաններում տեղակայված անտառապատ Շորին Ձոր կիրճը ժամանակին գրեթե աննկատ մնացած բնական հարստություն էր, որն այսօր վերածվել է հանրային հանգստի և էկո-արկածային զբոսաշրջության աշխույժ կենտրոնի:

Քովիդ-19 համավարակից և 2020 թվականի պատերազմից հետո Գորիսի համայնքապետարանը նախաձեռնեց տեղական տնտեսության վերականգնման և ներդրումային միջավայրի ամրապնդման հավակնոտ գործընթաց: Տեսլականը հստակ էր՝ կայուն զբոսաշրջության սկզբունքների համաձայն պահպանել կիրճի անաղարտ գեղեցկությունը՝ միաժամանակ այն հասանելի դարձնելով բնակիչների և այցելուների համար: Այս տեսլականը ձևավորվեց որպես զարգացման շոշափելի ծրագիր, որը ֆինանսավորվեց Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների կողմից՝ համայնքապետարանի և մասնավոր ձեռնարկատերերի համաֆինանսավորմամբ:

Ծրագրի շրջանակում համայնքապետարանը զգալիորեն բարելավեց կիրճի մատչելիությունը՝ վերանորոգելով ճանապարհը, տեղադրելով արևային էներգիայով աշխատող լուսավորություն և ապահովելով անվտանգության միջոցառումներ՝ ներառյալ ջրահեռացման համակարգեր և պաշտպանական պատնեշներ: Այս բարելավումները հնարավորություն են տալիս այցելուներին անվտանգ և հարմարավետ ուսումնասիրել տարածքը:

Արկածային այգին առաջարկում է էկո-զբոսաշրջային փորձառություն՝ զբոսանք, քայլարշավ, հեծանվավարություն և ժայռամագլցում: Հիմնական տեսարժան վայրերից մեկը գեղատեսիլ արահետն է, որը ոլորվում է խիտ կանաչապատ տարածքով և տանում դեպի 15 մետր բարձրությամբ ջրվեժ:

Տեղանքի երկարաժամկետ և կայուն զարգացումն ապահովելու նպատակով համայնքապետարանն ակտիվորեն խրախուսեց մասնավոր հատվածի ներգրավումը: Գորիսեցի ձեռնարկատեր Իրինա Դարբինյանն առաջիններից էր, ով միացավ նախաձեռնությանը՝ կիրճի հարևանությամբ բացելով հյուրատուն և տաղավարներ: Շրջապատող բնական միջավայրին ներդաշնակ ձևավորված այս կառույցները նպաստել են, որպեսզի տարածքը վերածվի երեկոյան զբոսանքների, սոցիալական հավաքների և համայնքային շփումների սիրված վայրի:

Շորին Ձորի զբոսաշրջային տնտեսությունները



«Այս նախագիծն ինձ վստահություն տվեց ներդրում կատարել Գորիսում շատ դժվար ժամանակահատվածից հետո: Այն իրական ներուժ ունի ավելի շատ այցելուներ ներգրավելու, աշխատատեղեր ստեղծելու և տեղական տնտեսությանը նոր շունչ հաղորդելու համար»,- նշում է Իրինա Դարբինյանը:

Ծրագրի վաղ հաջողությամբ ոգեշնչված՝ այլ ձեռնարկատերեր ևս արդեն դիմել են համայնքապետարանին՝ տարածքի հետագա զարգացման նոր գաղափարներով:

Թեև Շորին Ձորը դեռևս ունի չբացահայտված ներուժ, այն արդեն դարձել է օրինակելի նախաձեռնություն, որը ցույց է տալիս, թե ինչպես կարող են բնապահպանական զբոսաշրջությունը, համայնքային հանձնառությունն ու մասնավոր նախաձեռնությունը համատեղ ուժերով խթանել տեղական զարգացումը և ներկայացնել Գորիսի բացառիկ գեղեցկությունը:

Մասիս

Արևային էներգիան ապահովում է Մասիսի գյուղական մանկապարտեզների անընդմեջ ուսուցումն ամբողջ տարվա ընթացքում

Մարմարաշենի մանկապարտեզի տնօրեն Լիա Հակոբյանը

Արարատի մարզի Մասիս համայնքի Արգավանդ, Զրահովիտ, Մարմարաշեն, Սայաթ-Նովա և Զորակ բնակավայրերի մանկապարտեզները տարիներ շարունակ բախվում էին նույն խնդրին. ձմռան ամիսներին ստիպված էին փակվել ջեռուցման բարձր ծախսերի պատճառով: Միևնույն ժամանակ, ավելի մեծ մանկապարտեզները չէին կարող ընդունել հավելյալ երեխաներ, ինչի հետևանքով շատ ընտանիքներ ցուրտ սեզոնին զրկվում էին նախադպրոցական կրթության հնարավորությունից:

Ձմեռային ջեռուցման ֆինանսական բեռը հատկապես ծանր էր համայնքային փոքր մանկապարտեզների համար: Համայնքի սահմանափակ բյուջեն թույլ չէր տալիս ապահովել պատշաճ ջեռուցում կամ ներդրումներ անել շենքային պայմանների, կահույքի և ուսումնական նյութերի բարելավման ուղղությամբ:

Այսօր, սակայն, նույն մանկապարտեզները Հայաստանի գյուղական համայնքներում դարձել են նորարարության և կայուն զարգացման վառ օրինակներ: Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման արդյունքում նրանք այժմ ապահովված են հուսալի, վերականգնվող էներգիայով՝ մշտապես ունենալով ջեռուցում, լուսավորություն և տաք ջուր: Երեխաները կարող են հարմարավետ պայմաններում հաճախել մանկապարտեզ ամբողջ տարվա ընթացքում՝ անգամ ամենացուրտ ամիսներին:

Փոփոխությունների սկիզբը դրվել է 2023 թվականին, երբ Մասիս համայնքը մասնակցեց Տեղական զարգացման հիմնադրամի մրցույթին՝ հինգ գյուղական մանկապարտեզներում վերականգնվող էներգիայի լուծումներ ներդնելու գաղափարով: Ծրագիրը մշակվել և իրականացվել է բնակիչների, վարչական ղեկավարների և համայնքային ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ՝ դառնալով համայնքահեն զարգացման լավագույն օրինակներից մեկը:

«Մենք բոլոր բնակավայրերում կազմակերպեցինք հանրային լսումներ և քննարկումներ»,- հիշում է Մասիս համայնքի զարգացման և ներդրումների գծով ավագ մասնագետ Անգելինա Խաչատուրյանը: **«Առաջարկները շատ էին, բայց ինձ ամենից շատ տպավորեց Սայաթ-Նովա բնակավայրի մի մանկավարժի խոսքը. նա ասաց, որ եթե կարողանան էներգիա խնայել, այդ գումարով կգնեն նոր ուսումնական նյութեր երեխաների համար: Եվ համայնքի քվեարկության արդյունքում ընտրվեց հենց արևային վահանակների նախագիծը»:**

Տեղադրված արևային համակարգերն այժմ ապահովում են բավարար էներգիա էլեկտրական սարքերի աշխատանքի, մանկապարտեզների ջեռուցման, խոհարարության, մաքրման ու հիգիենայի համար անհրաժեշտ տաք ջրի հասանելիության համար:

Ջրահովտի մանկապարտեզի տնօրեն Շողակաթ Աբրահամյանը նշում է. «Մինչ համակարգի տեղադրումը մենք պարզապես չէինք կարող աշխատել ձմռանը. համայնքային բյուջեն չէր կարող հոգալ ջեռուցման ծախսերը: Այժմ, արևային էներգիայի շնորհիվ, մեկ կիսամյակում խնայել ենք մոտ 137,000 դրամ և ձեռք բերել լվացքի մեքենա, էլեկտրական վառարան, սառնարան և օդորակիչ»:

Անգելինա Խաչատուրյան ու Շողակաթ Աբրահամյան

Նմանատիպ դրական փոփոխություններ են արձանագրվել նաև Մարմարաշենի մանկապարտեզում, որը հինգից ամենամեծն է, ունի 108 սան: **«Ընդամենը կես տարում խնայել ենք շուրջ 650,000 դրամ»**,- ասում է Մարմարաշենի մանկապարտեզի տնօրեն Լիա Հակոբյանը: **«Այդ միջոցներով գնել ենք դիդակտիկ նյութեր և կահույք, իսկ առաջիկայում նախատեսում ենք արդիականացնել խոհանոցի սարքավորումները»:**

Յուրաքանչյուր մանկապարտեզում համակարգը ներառում է արևային ջրատաքացուցիչներ և ջերմապոմպեր՝ ապահովելով կայուն ջերմաստիճան և տաք ջուր: Ավելցուկային էներգիան կուտակվում է մարտկոցներում, ինչը հնարավորություն է տալիս համակարգն անխափան օգտագործելու անգամ ամպամած օրերին կամ գիշերային ժամերին:

Արդյունքները խոսուն են. հինգ մանկապարտեզների անընդմեջ աշխատանք ամբողջ տարվա ընթացքում, տարեկան շուրջ երկու միլիոն դրամի խնայողություն, ինչպես նաև ածխաթթու գազի արտանետումների կրճատում տարեկան մոտ 21 տոննայով:

Այս նախաձեռնությունը ոչ միայն նվազեցրել է ծախսերն ու բնապահպանական ազդեցությունը, այլև ընդլայնել է նախադպրոցական կրթության հասանելիությունը տասնյակ ընտանիքների համար: Այն ապացուցում է, որ տեղական նախաձեռնությունը, վերականգնվող էներգիան և համայնքային մասնակցությունը միասին կարող են ստեղծել իրական և երկարաժամկետ փոփոխություն:

Մարտունի

Մարտունի համայնքում արյան հետազոտություններն ավելի արագ և մատչելի են դարձել

Մարտունու բժշկական կենտրոնը տարիներ շարունակ արյան նմուշները հաճախ ուղարկում էր Երևան՝ հետազոտության, ինչի հետևանքով երկարում էր սպասելաժամանակը, ավելանում էին ծախսերը, ինչպես նաև առաջանում էին նմուշների տեղափոխման հետ կապված բազմաթիվ խնդիրներ, որոնք դժվարություններ էին ստեղծում թե՛ բժիշկների, թե՛ բուժառուների համար:

«Որոշ դեպքերում ստիպված էինք օրերով սպասել արդյունքներին, և դա սթրեսային էր ինչպես բժիշկների, այնպես էլ բուժառուների համար: Նմուշների տեղափոխումը ևս կապված էր բազմաթիվ խնդիրների հետ, քանի որ ոչ միշտ էր հնարավոր ապահովել տեղափոխման անհրաժեշտ պայմանները,- ասում է Մարտունու բժշկական կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար և գլխավոր բժիշկ Անդրանիկ Հարությունյանը:- Այժմ կարող ենք հետազոտությունների մեծ մասն իրականացնել տեղում՝ արագ և հուսալի, ինչը թույլ է տալիս առանց հապաղելու որոշումներ կայացնել»:

2024 թվականի փետրվարից Մարտունու բնակիչներն այլևս կարիք չունեն երկար ճանապարհ անցնելու կենսական նշանակության արյան հետազոտություններ կատարելու համար: Այժմ նրանք կարող են տեղում ստանալ ավելի արագ, ավելի ճշգրիտ և ավելի մատչելի ախտորոշում՝ խնայելով այն ծախսերն ու անհարմարությունը, որոնք նախկինում սովորական էին դարձել: Մարտունու բժշկական կենտրոնի լաբորատոր ծառայությունների արդիականացումը ոչ միայն բարձրացրել է բժշկական արդյունավետությունն ու որակյալ ծառայությունների հասանելիությունը, այլև ամրապնդել է վստահությունը տեղական առողջապահական համակարգի նկատմամբ:

«Մենք միշտ այստեղ ենք գալիս, քանի որ վստահում եմ այս հաստատության անձնակազմին, բոլորը շատ պատասխանատու են, հետազոտությունները ճշգրիտ են, գումարային առումով էլ ավելի մատչելի է, քան այլ լաբորատորիաներում», - ասում է 43-ամյա բնակիչ Մայրանուշը, ով դստեր հետ այցելել էր բուժկենտրոն:

Հեմատոլոգիական և իմունոֆլյուորեսցենտ սարքավորումները ձեռք են բերվել Հիմնադրամի աջակցությամբ, ինչպես նաև Մարտունու համայնքապետարանի համաֆինանսավորմամբ: Նախաձեռնությունը ծագել է տեղի բնակչության՝ այդ թվում բժիշկների և բուժառուների առաջարկած գաղափարներից՝ ուղղված համայնքի իրական կարիքներին:

«Երբ տեղեկացանք դրամաշնորհային մրցույթի մասին, Մարտունի համայնքի բոլոր բնակավայրերում անցկացրեցինք հանրային լսումներ, գեներացրեցինք համայնքի զարգացմանը նպաստող գաղափարներ և ներկայացրեցինք երեք ծրագրային առաջարկ: Արդյունքում հիվանդանոցի սարքավորումների արդիականացման ծրագիրն արժանացավ դրամաշնորհի», - ասում է Մարտունու համայնքապետարանի գլխավոր մասնագետ Վարազդատ Միերյանը:

Բժշկական անձնակազմը նշում է, որ կրճատվել է պահանջվող աշխատաժամանակը, ընթացակարգն ու արդյունքների ճշգրտությունը բարելավվել են, բուժառուներն էլ օգտվում են ավելի մատչելի ծառայություններից և ավելի արագ արդյունքներից:

Մարտունու բուժկենտրոնի բժիշկ-կենսաքիմիկ և ինժեներ Սիմա Խաչատրյանն ասում է.
«Նախկինում 40 րոպեում ստանում էինք միայն 5 բուժառուի 8 հետազոտության արդյունք: Այժմ մշակման համար պահանջվող ժամանակը կրճատվել է, իսկ հետազոտությունների քանակն ու ճշգրտությունն՝ աճել»:

Ըստ կենտրոնի ղեկավարության՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրումը կարևոր քայլ է Մարտունիում ավելի ամուր և կայուն առողջապահական համակարգի զարգացման ուղղությամբ. այն զրոյացնում է լաբորատոր հետազոտությունների վերլուծության մեջ մարդկային սխալի գործոնը և կրճատում մշակման համար պահանջվող ժամանակն ու ֆինանսական ծախսերը:

Լաբորատորիայի աշխատակիցները գլխավոր բժշկին են ներկայացնում սարքավորումների աշխատանքը

Մեղրի

Վերականգնված կամուրջը զարգացման նոր ուղիներ է բացում Վանք և Կալեր գյուղերի համար

Հայաստանի հարավային դարպասի՝ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի մաս կազմող Վանք և Կալեր գյուղերը երկար տարիներ իրենց գոյությունը պահպանել են գյուղատնտեսության, անասնապահության և մեղվաբուծության շնորհիվ: Սակայն գյուղերը Մեղրիի մայրուղուն կապող հուսալի կապի բացակայությունը լրջորեն սահմանափակել էր շուկաների, կենսական ծառայությունների, բերրի հողերի և արոտավայրերի հասանելիությունը:

Հին, ավերված կամրջով անցումը գրեթե անհնար էր, հատկապես բեռնատարների համար: Անասնապահությունն ու փոքրածավալ մեղվաբուծությունը խիստ սահմանափակ եկամուտներ էին ապահովում, քանի որ հովիվներն ու մեղվաբույծները չունեին մուտք դեպի ընդարձակ արոտավայրեր: Այս մեկուսացվածությունը խաթարում էր տեղական տնտեսության զարգացումը և դժվարացնում ընտանիքների կենսապահովման բարելավումը:

«Ամեն անգամ, երբ փորձում էինք հին կամրջով անցնել ճանապարհի մյուս կողմը, խաչակնքվում էինք: Մարդիկ նույնիսկ մեքենայից իջնում էին, որ այն թեթևանա, ու կամուրջը չփլուզվի»,- պատմում է Վանքի բնակիչ Մարտինը:

2023 թվականի վերջում Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների աջակցությամբ, ՀՀ կառավարության և Մեղրիի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ ամբողջությամբ վերանորոգվեց Վանք և Կալեր գյուղերի խաչմերուկում գտնվող 20 մետր երկարությամբ երկաթբետոնե կամուրջը: Այսպիսով, գյուղերը տասնամյակներ անց առաջին անգամ ապահով կապ ստացան մայրուղու հետ:

Նոր կամրջի շահագործմամբ երկու գյուղերի շուրջ 150 գյուղատնտես այժմ ունի անխափան հասանելիություն արոտավայրերին, ինչը զգալիորեն բարելավել է անասնագլխաքանակի առողջությունն ու արտադողականությունը: Տեղացի հովիվների խոսքով՝ կաթի և մսի արտադրությունն աճել է մոտ 35 տոկոսով, իսկ արտադրանքն այժմ մայրուղով անմիջապես տեղափոխվում է շուկաներ:

Միևնույն ժամանակ, ծաղկավետ տարածքների հասանելիությունը վերակենդանացրել է մեղվաբուծությունը: Տեղադրվել է մի քանի տասնյակ նոր փեթակ, իսկ մեղվաբույծները հայտնում են օրգանական մեղրի՝ տարածաշրջանային գնորդների համար նախատեսված առաջին արտահանելի խմբաքանակի մասին:

Նախկին կամուրջը

Վերանորոգված կամուրջը

Հայաստանում Գերմանիայի և Շվեյցարիայի դեսպանությունների ներկայացուցիչները կամրջի բացման արարողության ժամանակ

«Այս կամուրջը մեզ փրկեց: Եթե այս ենթակառուցվածքը չլիներ, այդ երկու գյուղերը պարզապես կվերանային», – ասում է տեղաբնակ Աշոտը:

Նոր կամուրջը Վանքն ու Կալերն ուղղակիորեն կապում է Մեղրիի մայրուղուն՝ Հայաստանի՝ առևտրի և տեղաշարժի կենսական հարավային միջանցքին: Այս կապն արմատապես փոխել է ծառայությունների, շուկաների և հողերի հասանելիությունը:

Կամուրջը կարևոր դեր ունի նաև անվտանգության ապահովման գործում. տարածքը «Արևիք» ազգային պարկի մաս է կազմում, և այժմ հրշեջ մեքենաները կարող են հեշտությամբ հասնել հրդեհավտանգ գոտիներ:

Ծրագիրը խթանել է նաև երիտասարդների հետաքրքրությունը գյուղատնտեսության և բնապահպանության նկատմամբ: Մոտակա Վարդանիձոր գյուղի երիտասարդները սկսել են զարգացնել ագրոտուրիզմը, կազմակերպել դպրոցական էքսկուրսիաներ դեպի Վանքի ջրվեժ և Կալերի աղբյուրներ:

«Այդ տարածքներ կատարած էքսկուրսիաները շատ տարածված են դարձել, որոշ դասարաններ նույնիսկ ավարտական միջոցառումները բնության գրկում են կազմակերպում», – ասում է Վարդանիձորի բնակչուհի Վարդուհին:

«Խորհրդային տարիներին երկու գյուղերն էլ խիտ բնակեցված էին, բայց ենթակառուցվածքների բացակայության պատճառով աստիճանաբար կանգնեցին վերացման եզրին: Սակայն մենք հավատում ենք, որ ապագայում դրանք կրկին կվերածնվեն»,- եզրափակում է Աշոտը:

Վանք-Կալեր կամուրջը վառ օրինակ է, թե ինչպես կարող է լավ մտածված, համագործակցության և համայնքային մասնակցության վրա հիմնված, երկարաժամկետ կայունություն ապահովող ենթակառուցվածքը ստեղծել բարելավված կենսապայմաններ և ապագայի նկատմամբ վերականգնված հույս:

Համայնքի բնակիչներ Մարտինը, Վարդուհին և Աշոտը

Չարենցավան

Ձիավարության կենտրոնը նոր հնարավորություններ է բերում Չարենցավան

Արզական գյուղում հիմնված ձիավարության նոր կենտրոնը Չարենցավան միավորված համայնքի զբոսաշրջությանն ու համայնքային կյանքին նոր շունչ է հաղորդում:

Տեղացի ձեռնարկատեր Արսեն Խլղաթյանը Ձիավարության «Միրաժ» կենտրոնը հիմնադրելով՝ իրականություն դարձրեց իր վաղեմի երազանքը: Նրա տեսլականը միայն բիզնեսը չէր. նա ցանկանում էր ստեղծել մի վայր, որը կխթաներ զբոսաշրջությունը, կստեղծեր աշխատատեղեր և կապահովեր սոցիալական օգուտ համայնքի համար:

«Այս կենտրոնն իմ կյանքի ամենամեծ ձեռքբերումն է: Ես ցանկանում էի ստեղծել մի բան, որը կմիավորի մարդկանց, կաջակցի երեխաներին և նոր հնարավորություններ կբացի մեր համայնքի համար»,- ասում է Արսեն Խլղաթյանը:

Գաղափարը ձևավորվեց Չարենցավանի համայնքապետարանի հետ սերտ համագործակցության արդյունքում: 2021 թվականին համայնքապետարանը դիմեց Տեղական զարգացման հիմնադրամին, որը ստեղծվել էր՝ աջակցելու համայնքներին հաղթահարել Քովիդ-19 համավարակի տնտեսական հետևանքները: Դրամաշնորհի, համայնքային միջոցների ու Արսենի սեփական ներդրումը կյանքի կոչեցին նախագիծը:

Մեկ հեկտար մասնավոր սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա կառուցված կենտրոնն իր դռները բացեց 2022 թվականի սեպտեմբերին և արագորեն մեծ հետաքրքրություն առաջացրեց: Պահանջարկը բարձր է, քանի որ տարածքում քիչ են այնպիսի վայրերը, որոնք համատեղում են սպորտը, հանգիստը և զբոսաշրջությունը՝ չնայած հյուրանոցների և հանգստավայրերի աճող թվին:

«Նման նախաձեռնություններին աջակցելն ամրապնդում է տեղական տնտեսությունը՝ միաժամանակ բարելավելով կյանքի որակը: Ձիասպորտի կենտրոնը անմիջապես արձագանքում է ինչպես մեր բնակիչների, այնպես էլ այցելուների կարիքներին», - նշում է Չարենցավանի համայնքապետարանի Զարգացման ծրագրերի և ՏՏ բաժնի պետ Աշոտ Ծերունյանը:

Այսօր կենտրոնն առաջարկում է ձիավարության դասեր, ուղեկցվող զբոսանքներ, արշավներ և հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար

անվճար հիպոթերապիայի սեանսներ: Կան նաև տեղական մարզական ակումբների հետ համագործակցելու և տաղանդավոր պատանի ձիավարներին անվճար մարզումներ առաջարկելու ծրագրեր:

Կենտրոնի մարզիչ Արսեն Պողոսյանը շեշտում է, որ փորձառությունը շատ ավելին է, քան պարզապես ձիավարությունը. **«Թամբի վրա իրենց վստահ զգացողների համար մենք կազմակերպում ենք լեռնային արշավներ գեղատեսիլ արահետներով, որոնք առաջարկում են թե՛ արկածային զգացողություններ, թե՛ հիասքանչ համայնապատկերային տեսարաններ: Այս զբոսանքները համատեղում են ադրենալինով լի արկածը և բնության հետ կապ հաստատելու բացառիկ հնարավորությունը»:**

Բացման օրվանից ի վեր կենտրոնը ամսական ընդունում է շուրջ 500 այցելու և տրամադրում ներառական հանգստի և թերապևտիկ ծառայություններ տեղացիներին:
Առաջարկելով ակտիվ հանգստի հնարավորություններ, սոցիալական ներառականության խթանում և այցելուների ներգրավում՝ ձիասպորտի «Միրաժ» կենտրոնը նպաստում է Չարենցավան համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Սևան

Թվային լուսակիրները Սևան քաղաքը դարձնում են ավելի անվտանգ և ներառական

Շարժական մշակութային կենտրո՞ն, թե՞ քաղաքային զբոսայգում գեոդեզիական վրանի տեղադրում նորարարական ցուցասրահի գործարկմամբ: Իսկ միգուցե թվային լուսակիրնե՞ր քաղաքի բանուկ խաչմերուկներում կամ թվային գրատախտակնե՞ր համայնքային մանկապարտեզներում: Սրանք են եղել հիմնական նորարարական գաղափարները, երբ Սևանի համայնքապետարանը պատրաստվում էր դիմել Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում հայտարարված մրցույթին:

«Երբ մենք իմացանք այս ծրագրի մասին, դուրս եկանք ավանդական գաղափարների շրջանակից՝ ասֆալտ, տանիքի վերանորոգում,- պատմում է Սևանի համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի պետ Դավիթ Թորոսյանը: - **Մենք որոշեցինք ներկայանալ նորարար գաղափարով, որը նաև ներառում էր կայուն զարգացման մի քանի նպատակ՝ մաքուր և մատչելի էներգիա, նորարարություն, ավելի ապահով ճանապարհներ, կրճատված անհավասարություն և կայուն համայնք»:**

Բնակիչների հետ քննարկումների ու համայնքի կարիքները գնահատելու արդյունքում որոշվեց առաջնահերթ կարևորություն տալ երթևեկության անվտանգությանը: Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների աջակցությամբ և Սևանի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ հիմնական խաչմերուկներում ժամանակակից թվային լուսացույցների և հետիոտնային ազդանշանների տեղադրումը նպատակ ունի բարելավել ճանապարհային անվտանգությունը և ապահովել ներառականություն բոլոր բնակիչների՝ այդ թվում տեսողական կամ լսողական խնդիրներ ունեցողների համար:



Նախադպրոցական տարիքի երեք երեխայի հետ փողոցն անցնող Գայանեն նշում է, որ լուսացույցի շնորհիվ այժմ շատ ավելի անվտանգ է դարձել այս խաչմերուկը. **«Անվտանգությունից բացի այս թվային լուսացույցները նաև շատ ուսուցողական են: Ամեն անգամ աղջիկս ասում է՝ մա՛մ, նայի՛ր, արդեն կանաչ մարդուկն է, կարող ենք հիմա [փողոցն] անցնել»:**

Կենտրոնական փողոցից զատ Սևանում լուսացույցներ նախկինում չեն եղել, իսկ արևային էներգիայով աշխատող թվային լուսացույցները ոչ միայն բարձրացնում են անվտանգությունը, այլև հնարավորություն են տալիս համայնքին խնայված միջոցներն ուղղել այլ ծրագրերի իրականացմանը: Հին լուսացույցները տեղափոխվել են ավելի քիչ ծանրաբեռնված խաչմերուկներ՝ ընդլայնելով նախագծի օգուտները քաղաքի տարբեր հատվածներում: Փոփոխությունը նկատել են նաև վարորդները: Քաղաքի շուկայի բանուկ հատվածի մոտ են հավաքվում նաև Սևան-Երևան երթուղին սպասարկող վարորդները, ովքեր նշում են, որ **«անհամեմատ թեթևացել է այս հատվածի երթևեկությունը»:**

«Խաչմերուկը հատելն ավելի հարմար և անվտանգ է դարձել ընտանիքների համար, - նշում է համայնքի բնակիչ Ջեմման: - Լուսացույցներին զուգահեռ վերանորոգվել են նաև խաչմերուկների մայթեզրերը, տեղադրվել են թեքահարթակներ»:

Թվային լուսացույցների տեղադրումը քաղաքում երթևեկության անվտանգության ու ապահովության, ներառականության բարելավման ծավալուն նախաձեռնության մաս է կազմում, որը Սևանի համայնքապետարանն առաջիկայում նախատեսում է շարունակել և ընդլայնել՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով համայնքի կայուն զարգացման համար:

Սևան համայնքի թվային լուսայույցները

Վաղարշապատ

Էջմիածնում կառուցված նոր ֆուտբոլային դաշտը խթանում է տեղի երեխաների ֆիզիկական ակտիվությունը

Էրիկը, Դավիթը և Էդիկը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Չարենց թաղամասում ապրող երեք դեռահաս ընկերներ, ամեն օր դպրոցից շտապում են տուն, որպեսզի իջնեն բակ ու ֆուտբոլ խաղան: Վերջերս սա դարձել է նրանց ամենասիրելի առօրյան:

2024 թվականի հունիսից նրանց թաղամասում նկատելի փոփոխություն է տեղի ունեցել: Նորաստեղծ բազմաֆունկցիոնալ մարզադաշտը դարձել է համայնքային ոգու և երիտասարդների ներգրավվածության խորհրդանիշ՝ իրականություն դառնալով Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների և Վաղարշապատ համայնքապետարանի համաֆինանսավորման շնորհիվ:

Տարիներ շարունակ այստեղ չկար անվտանգ տարածք, որտեղ երեխաները կարող էին մարզվել, շփվել և պարզապես վայելել սպորտը: Էջմիածնի Չարենց թաղամասի նախկինում անկանոն ու անխնամ ասֆալտապատ տարածքն այսօր վերածվել է ժամանակակից մարզական ենթակառուցվածքի: Համայնքի մասնակցությամբ և տեղական աշխատուժի ներգրավմամբ կառուցված մարզադաշտը ոչ միայն ստեղծեց աշխատատեղեր ու սեփականության զգացում, այլև ցույց տվեց, թե ինչի կարելի է հասնել համատեղ գործողությունների միջոցով:

«Մենք ակտիվ մասնակցում էինք ողջ գործընթացին, որպեսզի մեր ակնկալիքներն իրականություն դառնան»,- ասում է 12-ամյա Էրիկը:

«Նախկինում դաշտի տարածքն ասֆալտապատ էր, բայց անխնամ: Վաղարշապատի համայնքապետարանի և Տեղական զարգացման հիմնադրամի համագործակցության արդյունքում այն այսօր դարձել է քաղաքի ամենագեղեցիկ հատվածներից մեկը,- հավելում է համայնքապետարանի նախկին խոսնակ Սիրանուշ Գևորգյանը: - **Երեխաները**

կազմակերպում են ֆուտբոլային մրցումներ, իսկ բնակիչներն օգնում են մեզ դաշտը մաքուր և խնամված պահել»:

Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության օրը, մարզադաշտի պաշտոնական բացման արարողությունը համախմբեց պաշտոնյաների, միջազգային և տեղական գործընկերների, ինչպես նաև ոգևորված երեխաների ու երիտասարդների: Այդ օրվանից մարզադաշտը դարձել է ակտիվ ու աշխույժ կենտրոն, որտեղ ֆուտբոլն ու բասկետբոլը միավորում են ինչպես տղաներին, այնպես էլ աղջիկներին:

20-ամյա Սիրանուշը պատուհանից դուրս էր նայում, երբ փոքր տղաները խնդրեցին իր գնդակը: Փոխանակ այն պատուհանից դուրս նետելու՝ նա հագավ մարզահագուստը, վերցրեց գնդակը և

միացավ բասկետբոլի խաղին: **«Սխալ պատկերացում կա, թե այս դաշտում խաղում են միայն տղաները, հատկապես՝ փոքր տարիքի: Ես նույնպես սպորտի սիրահար եմ. արդեն բավական ժամանակ զբաղվում եմ բասկետբոլով և վոլեյբոլով: Ժամանակ առ ժամանակ ես էլ եմ գալիս այստեղ՝ մարզվելու»**,- ասում է Սիրանուշը:

Այս տարածքը պարզապես մարզադաշտ չէ. այն նոր շունչ է հաղորդել թաղամասին, իսկ երեխաներին և երիտասարդներին՝ անվտանգ միջավայր՝ ակտիվ լինելու, ընկերական կապեր ձևավորելու և համայնքային պատկանելիության զգացումն ամրապնդելու՝ այսպիսով ցույց տալով, թե ինչպես կարող է ճիշտ ներդրումը մարդկանց կյանքում առաջացնել երկարաժամկետ և դրական փոփոխություններ:



Փամբակ

Դեբետ գյուղն այժմ ունի մաքուր ջրի հասանելիություն

Հայաստանի Լոռու մարզում է գտնվում փոքրիկ և խաղաղ Դեբետ գյուղը՝ շրջապատված կանաչ բլուրներով, ոլորապտույտ գետակներով և բարձր լեռներով: Իսկ գեղատեսիլ Լոռվա ձորով հոսում է Փամբակ և Ձորագետ գետերի միացմամբ առաջացած Դեբեդ գետը, որի անունից էլ անվանակոչվել է գյուղը: Օդը մաքուր է՝ լցված անտառների բուրմունքով, իսկ թռչունների դայլայլը տարածվում է հովիտներով:

Հովիտը, կարծես, կենդանի նկար է. գարնանն ու ամռանն այստեղ վայրի ծաղիկները տարածվում են դաշտերում, իսկ գետի երկու կողմերում բարձր ժայռերը շրջանակում են գյուղը՝ զարմացնելով այցելուներին: Աշնանը տերևները դառնում են ոսկեգույն, կարմրավուն և նարնջագույն՝ ջերմ ու խորհրդավոր շունչ հաղորդելով բնապատկերին:

Այնուամենայնիվ, տարիներ շարունակ այս գեղեցկության կողքին բացակայում էր կենսականը. Դեբետի շատ տնային տնտեսություններ չունեին խմելու ջրի հասանելիություն: Գյուղի բնակիչներն ստիպված էին երկար ճանապարհ անցնել, սարը բարձրանալ, որպեսզի հորերից կամ աղբյուրներից ջուր բերեն:

«Անգամ ամաչում ենք ասել, որ 21-րդ դարում գյուղացին չունի այնպիսի հիմնական պահանջի հասանելիություն, ինչպիսին ջուրն է,- ասում է Դեբետի բնակչուհի և դպրոցի ուսուցչուհի Մանուշ Սարգսյանը:- **Մեր տան հետևում կա փոքրիկ գետակ, և ամուսնուս հաջողվեց գոնե մի ջրագիծ անցկացնել լվացքի ու սպասքի համար, այնինչ խմելու ջուրը դեռ ստիպված ենք կրել դույլերով»:**

Դեբետի դպրոցի ուսուցչուհի Մանուշ Սարգսյան

Փոփոխությունը վերջապես տեսանելի է դառնում: Գյուղի հանդեպ սիրով լի երիտասարդների մի խումբ միավորվեց գյուղի վարչակազմի՝ Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանյանի և գյուղի վարչական ղեկավար Անուշ Սարգսյանի հետ՝ Դեբետում մաքուր ջուր ունենալու նպատակով պետական և տեղական կազմակերպությունների հետ համագործակցություն հաստատելու և դրամաշնորհներ փնտրելու:

Տեղական զարգացման հիմնադրամի և Փամբակ համայնքի համաֆինանսավորմամբ դեպի գյուղ ջրատարներ են տեղադրվել, իսկ ջրաբաշխիչ գծերը նորոգվել կամ փոխվել են:

«Լեռնագագաթի վրա ջրատարերն այժմ ամբողջությամբ տեղադրված են,- բացատրում է Դեբետի վարչական կենտրոնի օպերատոր Կարինե Նազլուխանյանը:- **Կառավարության սուբսիդիայի շնորհիվ էլ**

Դեբետի վարչական կենտրոնի օպերատոր Կարինե Նազլուխանյանն ու վարչակազմի նախկին աշխատակից Նորայր Սարգսյանը

նորոգել ենք ջրաբաշխիչներն ու ներքին ցանցը, ինչի արդյունքում ջուրը հասնում է տներ, դպրոց և մանկապարտեզ»:

Գյուղի վարչակազմի նախկին աշխատակից Նորայր Սարգսյանը հետևել է աշխատանքներին. **«Հիմնական մարտահրավերը ճանապարհին ջրի կորուստը կանխելն էր: Հին խողովակները չէին դիմանում ճնշմանը և չէին կարողանում ջուրը հասցնել թեք հովտից վեր. դրանց փոխարինումն ու նորոգումը առանցքային է եղել ծրագրի հաջողության համար»:**

Ջրատարի ցանցի ավարտի հետ գյուղացիները վերջապես կարողացան պատկերացնել ապագա, որտեղ թարմ, անվտանգ ջուրը անմիջապես կհոսի իրենց տների խողովակներով: Երեխաները դպրոցում կխմեն մաքուր ջուր, մայրերը նայլևս ծանր դույլեր չեն կրի, իսկ համայնքը կշարունակի զարգանալ:

Գյուղացիները նշում են, որ սա կարծես երազ է. բացում են ծորակը և վերջապես իրենց տներում ջուն ունեն: Սա նրանց նոր հույս է տալիս գյուղի ապագայի համար:

Ծրագիրը պետական սուբսիդիաների շնորհիվ շարունակվել է մինչև 2025 թվականի ավարտը:

Դեբետի բնակիչների համար գարունը ոչ միայն ծաղիկներ կբերի, այլև ջուր, ապահովության զգացում և նոր հնարավորություններ:

Գյուղի ջրագծերի ջրաբաշխիչը

Նոր դպրոցի ջրառն ու ջրամբարը կառուցման ընթացքում



Ֆիոլետովո

Ֆիոլետովոյի մոլոկան համայնքի կյանքը լեռնային միջավայրում

Լոռու մարզի կանաչ լեռներում տեղակայված Ֆիոլետովոյի փոքրիկ գյուղում արդեն ավելի քան երկու դար բնակվում է ռուսների ազգային փոքրամասնություն ներկայացնող մոտ 1,350 մոլոկան: Այստեղ ժամանակը, կարծես, ավելի դանդաղ է ընթանում, և բնակիչները կարողանում են վայելել պարզ, բայց իմաստալից կյանքը: Գյուղը՝ իր ավանդական տներով և գունավոր այգիներով, շրջապատված է ալիքավոր լեռնաշղթաներով ու անաղարտ բնությամբ: Օդը թարմ է, իսկ ծաղկող թռչունների և խշշացող տերևների ձայները ստեղծում են խաղաղ մթնոլորտ:

Այստեղի կյանքը կախված է եղանակների և սեզոնների ռիթմից: Ֆիոլետովոյի բնակիչները կապված են հողին. նրանց առօրյան ձևավորվում է գյուղատնտեսական ցիկլերի շուրջ: Շատ ընտանիքներ փոքր ֆերմերային տնտեսություններ են վարում, որտեղ աճեցնում են տարբեր մշակաբույսեր՝ կաղամբ, գազար, կարտոֆիլ և հատապտուղներ: Հողը բերրի է, իսկ գյուղացիները հպարտությամբ աշխատում են միասին, որպեսզի ապահովեն առատ բերք բոլորի համար:

Գյուղում բազմամյա ավանդույթ է անասունների խնամքը, և շատ տնային տնտեսություններ պահում են խոշոր եղջերավոր կենդանիներ, այծեր և հավեր: Այս կենդանիները կենսական նշանակություն ունեն՝ ապահովելով գյուղացիներին կաթով, ձվով ու մսով: Ավագ սերունդն էլ երիտասարդներին փոխանցում է գյուղատնտեսական գիտելիքն ու հողի խնամքի լավագույն միջոցները՝ պահպանելով գյուղի ավանդույթները:

Տաք ամիսներին դաշտերում կյանքն արթնանում է, երբ ընտանիքները հավաքվում են հողերը մշակելու, քաղհանելու ու հնձելու: Չնայած ծանր աշխատանքին՝ շատ տարածքներ տարիներ շարունակ անմշակ են մնացել ձեռքի աշխատանքից կախվածության պատճառով: Անհրաժեշտ տեխնիկայի բացակայության արդյունքում էլ գյուղացիները չէին կարող ընդլայնել իրենց հողամասերը ու ավելացնել արտադրությունն ու եկամուտը:

Ֆիոլետովո համայնքի ղեկավար Ալեքսեյ Չիչյովը նշում է, որ սուղ բյուջեով առկա խնդիրները լուծելը բավականին դժվար է: **«Մենք նախկինում հողերը ցանում և հնձում էինք ձիերի օգնությամբ կամ մոտակա գյուղերից վարձած տրակտորի միջոցով: Այն ընտանիքները, որոնք այլևս չէին կարողանում տրակտոր վարձել, լքեցին իրենց հողերը»**,- ասում է նա:

Նախագծի աջակցությամբ ձեռքբերված տրակտորը

Ֆիոլետովո համայնքի ղեկավար Ալեքսեյ Չիչյովը

Այս մարտահրավերներին աջակցելու նպատակով Տեղական զարգացման հիմնադրամի միջոցով՝ Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների ֆինանսավորմամբ և GIZ-ի իրականացմամբ, համայնքը ձեռք բերեց տրակտոր, և արդյունքում նախկինում անմշակ հինգ հեկտար հողը նորից սկսեց մշակվել:

«Այս տրակտորի շնորհիվ շատ հողատարածքներ վերականգնվեցին»,- ասում է պարոն Չիչյովը:- **Տրակտորը գործարկվեց ապրիլի վերջից մինչ օգոստոսի վերջ՝ խոտհունձի սեզոնին հնձելով լեռնային տարածքները, իսկ ձմռան ամիսներին լեռներ բարձրացրեց տուկերը, որտեղ պահում ենք կովերին և այլ ընտանի կենդանիներին»:**

Ֆիոլետովոյի բնակիչների համար այս զարգացումը լայնածավալ գյուղատնտեսական աշխատանքների սկիզբ է նշում՝ ավելի շատ հողերի մշակմամբ և բերքահավաքով՝ աջակցելով տնային տնտեսություններին:

«Նույնիսկ արտերկիր աշխատանքի մեկնածներից շատերը վերադառնում են իրենց հայրենիք՝ հողամաս գնելու և տուն կառուցելու: Իսկ իմ ընտանիքն արդեն այդ ամենն ունի, և մենք նույնիսկ չենք մտածում գյուղը թողնելու մասին»,- ասում է գյուղացի Միխայիլ Զադորկինը ում 3-ամյա դուստրն օգնում է իրեն կերակրել կենդանիներին:

Ընտանեկան և համայնքային կապերն այստեղ ամուր են, կյանքն էլ, թեև երբեմն բարդ, բայց լիարժեք է: Ֆիոլետովոյի բնակիչներն ապրում են պարզ, բայց կյանքի ու բնության հանդեպ խորը գնահատանքով՝ գյուղը վերածելով խաղաղության և դիմացկունության թաքնված գոհարի:

Լուսանկարներ

Շապիկ © Վահե Պողոսյան
Էջ 5 © ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Էջ 6 © Հայաստանում Գերմանիայի դեսպանություն
Էջ 7 © Հայաստանում Շվեյցարիայի դեսպանություն
Էջեր 11-30 © Վահե Պողոսյան
Էջեր 33-34 © Վահրամ Բաղդասարյան, Իրինա Դարբինյանի անձնական պահոց
Էջեր 37-47 © Վահե Պողոսյան
Էջեր 49-50 © Չարենցավանի համայնքապետարանի պահոց
Էջեր 53-66 © Վահե Պողոսյան

Որպես Գերմանիայի Դաշնային Հանրապետության սեփականության հանդիսացող ընկերություն՝ GIZ-ն աջակցում է Գերմանիայի կառավարությանը կայուն զարգացմանն ուղղված միջազգային համագործակցության ոլորտում իր նպատակներին հասնելու հարցում:

Հրատարակված է
Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից

Ընկերության կենտրոնական գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիր
Հանրապետության 59, 6-րդ հարկ
Երևան, Հայաստան, 0010
Հեռ.՝ +374 (0) 10 51 00 61

Էլ. փոստ՝ giz-armenia@giz.de
Կայք՝ www.giz.de/en

Պատասխանատու՝ Թոմ Լանդես
Հեղինակ՝ Լիկա Մկրտչյան
Խմբագիրներ՝ Նարինե Բեզիրգանյան, Միեր Հակոբյան

Ձևավորումն ու էջադրումը՝
«Զետտալյումեն» ՍՊԸ-ի

Լուսանկարները՝ Վահե Պողոսյանի, Վահրամ Բաղդասարյանի, Իրինա Դարբինյանի անձնական արխիվի, Չարենցավանի համայնքապետարանի արխիվի

Քարտեզներ.
Հրատարակությունում զետեղված քարտեզները նախատեսված են միայն տեղեկատվական նպատակներով և ոչ մի կերպ չեն հանդիսանում միջազգային իրավունքի համաձայն սահմանների և տարածքների ճանաչում:

GIZ-ը որևէ պատասխանատվություն չի կրում այս քարտեզների լիովին արդիական, ճիշտ կամ ամբողջական լինելու համար: Բացառվում է դրանց օգտագործման հետևանքով առաջացած ցանկացած ուղղակի կամ անուղղակի վնասի կամ վրիպակի համար որևէ պատասխանատվություն:

Երևան, 2026թ.

Նշումների համար